ՇԱՔՐՈ ՄՀՈՅԱՆ

Հայաստանի գիտությունը, քրդագիտությունը ծանր կորուստ կրեցին: 2007 թ. փետրվարի 1-ին Մոսկվայում հանկարծամահ եղավ ՀՀ - ԳԱԱ ակադեմիկոս, ճանաչված արևելագետ-քրդագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Շաքրո Խուդոյի Մհոյանը:



Շ. Մհոյանը ծնվել է 1930 թ. ապրիլի 12-ին, Հայաստանի Արագածի շրջանի Ալագյազ գյուղում, ծառայողի ընտանիքում:

1948 թ. ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Ինստիտուտն ավարտելուց հետո՝ 1952–1954 թթ. աշխատել է Ալագյազի միջնակարգ դպրոցում որպես պատմության ուսուցիչ: Հետագայում՝ 1956–1960 թթ., եղել է «Ռյա Թազա» թերթի խմբագրի տեղակալ:

1960 թ. Շ. Մհոյանը աշխատանքի է անցել Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում, որտեղ վարել է քրդագիտության բաժնի վարիչի պաշտոնը: 1963 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Քրդական ազգային-ազատագրական շարժումները Իրաքում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» թեմայով, իսկ 1978 թ.՝ Մոսկվայում դոկտորական ատենախոսություն՝ «Քուրդ ժողովրդի ազգային ինքնավարության հիմնահարցերը Իրաքում» թեմայով:

1990 թ. պրոֆ. Մհոյանը ընտրվել է Հայաստանի ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996 թ.՝ իսկական անդամ: 1994 թ. ակադեմիկոս Շ. Մհոյանը հրավիրվել է Մոսկվա և ստանձնել քրդագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրենի պաշտոնը՝ չխզելով իր կապերը Հայաստանի ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հետ:

Ակադեմիկոս Շ. Մհոյանը ականավոր քրդագետ էր և ծանրակշիռ ավանդ է ներդրել հայրենական քրդագիտության զարգացման մեջ: Նրա գրչին են պատկանում 10 մենագրություններ և մի քանի տասնյակ գիտական հոդվածներ:

Շ. Մհոյանը գիտահետազոտական աշխատանքները սերտորեն զուգակցել է մանկավարժականի հետ՝ դասախոսելով Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում: Առաջին անգամ նա է կազմել քուրդ ժողովրդի պատմության դասընթացը: Երկար տարիներ եղել է արևելագիտության ինստիտուտի գիտխորհրդի անդամ, հանդիսացել է «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի քրդագիտությանը նվիրված հատորների խմբագիրը:

Ակադեմիկոս Շ. Մհոյանը ճանաչված հեղինակություն էր արտասահմանյան քրդական գիտամշակութային և հասարակական շրջաններում, արևմտաեվրոպական քրդական մի քանի գիտական կենտրոնների պատվավոր անդամ էր:

Նա բնավորությամբ կենսուրախ և անմիջական անձնավորություն էր, սիրված և հարգված իր գործընկերների կողմից: Նրան այդպիսին մշտապես կհիշեն նրա գործընկերները և բարեկամները:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ